ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆ ԱԼԲԵՐՏԻ

ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ԿԵՆՍԱՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
(ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ)

**Է.00.03 - «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ. Հայկ Գրիգորի Ավետիսյան
պ.գ.դ. Գարեգին Սահակի Թումանյան
ա.գ.դ., պրոֆ. Հակոբ Երվանդի Սիմոնյան

Առաջատար կազմակերպություն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հունիսի 26-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ. գ. թ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության մարդաբանական տիպի, ժողովրդագրական պատկերի, կենսակերպի, սննդակարգի, թաղման ծեսի առանձնահատկությունների վերակազմությանն՝ ըստ գանգաչափական, ոսկրաչափական, սեռատարիքային և ատամնաախտաբանական հատկանիշների:

Թեմայի արդիականությունը: Կենսահնագիտությունը հնամարդաբանության հենքի վրա ձևավորված նոր գիտություն է, որի արդիականությունը պայմանավորված է կենսափաստի տեղեկատվական հավաստի կարողություններով և հին հասարակությունների կենսակերպի վերակազմության իրականացման ընդգրկուն հնարավորություններով:

Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան շրջափուլերի հնագիտությունը բավականին հանգամանորեն ուսումնասիրված է որպես մշակութային ֆենոմեն: Այս համատեքստում սևան-արցախյան և լճաշեն-մեծամորյան մշակույթների կրողների մարդաբանական նկարագրի, հնաժողովրդագրական պատկերի, կենսակերպի առանձնահատկությունների և էթնիկական պատմության վերակազմությունն արդիական է և լրացնում է տարածաշրջանի հին հանրությունների սոցիալ-մշակութային համայնապատկերը:

Լճաշենի և Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան հանրությունների մարդաբանական բնութագրերի ներխմբային վիճակագրական համեմատականի շնորհիվ պարզվեց նրանց ձևաբանական առանձնահատկությունների տարբերակվածությունը և միջխմբային փոխհարաբերությունների էկզոգամ բնույթը, ինչը տարածաշրջանի պատմամշակութային գործընթացների վերակազմության պարագայում կարևոր է և արդիական:

Կենսահնագիտական հետազոտությունների ոլորտում ատամնաախտաբանական հատկանիշների համեմատական վերլուծությունն ընդունված արդի մոտեցում է, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան հանրությունների սննդակարգի վերակազմության մեկնաբանությունների իրագործումը: Այն է՝ կոշտ սննդակարգի օգտագործումը, ածխաջրատային սննդանու չափավոր չափաբաժինը և քաղցի սթրեսային իրավիճակների բացակայությունը:

Հնամարդաբանության ոլորտում հնաժողովրդագրական նկարագրերի վերլուծությունն ըստ սեռատարիքային տվյալների՝ ավանդական բնույթ էր կրում: Լճաշենի և Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության մահացության ցուցանիշները ներկայացված են այլ հնամարդաբանական ընտրույթների համարժեք տվյալների համեմատական համատեքստում՝ համալրված հնագիտական,

լեզվաբանական, առասպելաբանական փաստարկներով, և, որպես ուսումնասիրման համալիր մեթոդ, համապատասխանում են արդի հումանիտար գիտության պահանջներին:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է Լճաշենի, Ներքին Գետաշենի, Ցամաքաբերդի, Նորատուսի, Արծվաքարի, Հացառատի, Քանագեղի, Նորաբակի դամբարանադաշտերից հավաքագրված ոսկրաբանական և, հիմնականում, գանգաբանական հավաքածուների կենսահնագիտական ուսումնասիրության շնորհիվ ներկայացնել Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության կենսակերպը, սննդային նախապատվությունները, նկարագրել Լճաշենի և Ներքին Գետաշենի դամբարանադաշտերում թաղված հին հանրությունների մարդաբանական տիպը, առանձնահատկությունները, ներպոպուլյացիոն տարբերակվածության աստիճանը: Աշխատանքի նպատակն է հաշվարկել նշված հին հանրությունների մահացության ցուցանիշները և վերակազմել հնաժողովրդագրական պատկերը, իրագործել Սևանի ավազանի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան գանգաբանական հավաքածուների հնաֆենետիկական համեմատական վերլուծականը, այլընտրանքային հատկանիշների միջինացված ցուցանիշները կիրառել Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան բնակչության ժառանգաբանական նմանությունը կամ տարբերակվածությունը փաստելու համար:

Թվարկած նպատակների իրագործման համար առաջադրված են հետևյալ խնդիրները ներկայացնել սևան-արցախյան և լճաշեն-մեծամորյան մշակույթներին պատկանող հնագիտական համայնապատկերը՝ որպես համալիր տնտեսաձև վարող, պարսպապատ բնակավայրերում ապրող, բարձր մետաղագործական և խեցեգործական ավանդներ ունեցող, անվավոր փոխադրամիջոցներ օգտագործող, նստակյաց հին հասարակության կենցաղ: Ցամաքաբերդի, Ներքին Գետաշենի, Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական ընտրույթների անհատական գանգաչափական տվյալները ենթարկել դիսկրիմինանտային վերլուծության:

Ներքին Գետաշենի միաժամանկյա ակտով իրագործած խմբային թաղումներից հայտնաբերված գանգերի ներխմբային ուսումնասիրությունն իրագործել կոմպոնենտային մեթոդի միջոցով: Սևանի ավազանի միջին-ուշբրոնզեդարյան բնակչության ատամնաախտաբանական վեց հատկանիշների վիճակագրական ուսումնասիրության արդյունքները համեմատել համաժամանակյա հարավռուսական տափաստանային բնակչության համարժեք տվյալների հետ՝ որպես ծայրահեղորեն տարբեր երկու տնտեսամշակութային տիպերին պատկանող հանրությունների:

Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Հնամարդաբանական հավաքածուները, որ ուսումնասիրվել են սույն աշխատության մեջ, հայտնաբերվել են Սևանի ավազանի արևմտյան և հարավային ափամերձ տարածքում (Լճաշեն, Ցամաքաբեդ, Ներքին Գետաշեն) պեղված դամբարանադաշտերից, վերաբերում են սևան-արցախյան միջինբրոնզեդարյան մշակույթին և թվագրվում են մ.թ.ա. XIX/XVIII – XVI դդ.:

Ուսումնասիրվել են նաև Լճաշենի և Ներքին Գետաշենի, ինչպես նաև Քանագեղի, Հացառատի, Դարի գլխի, Նորաբակի դամբարաններից պեղված ուշ բրոնզի առաջին երկու փուլերին (մ.թ.ա. XV-XIV և մ.թ.ա. XIV-XIII դդ.) պատկանող հնամարդաբանական ընտրույթները, որոնք վերաբերում են լճաշեն-մեծամորյան մշակույթին: Տեղադրության առումով խնդրո առարկա հուշարձանները զբաղեցնում են Սևանի ավազանի արևմտյան և հարավային ափամերձ տարածքները:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանությանը վերաբերող առաջին աշխատանքը հրատարակվել է 1929 թ.-ին՝ Վ. Բունակի կողմից: Խորհրդային տարիներին ուսումնասիրությունները իրականացվում էին միայն գանգաչափության ոլորտում: Բացակայում էին ոսկրաչափական, կենսահնագիտական և հնաժողովրդագրական վերակազմությունները: Վերջին տարիներին սկսեցին ի հայտ գալ հնաժողովրդագրությանը, կենսահնագիտությանը վերաբերող նոր աշխատություններ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնում: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած մոտ երեք տասնյակ աշխատություններում, հետազոտության արդյունքները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան հին հանրությունների մարդաբանական և կենսահնագիտական ուսումնասիրությունը կառուցված է գանգաչափական, ոսկրաչափական, ատամնաախտաբանական տվյալների հետազոտությունների հիման վրա՝ որպես սկզբնաղբյուր: Հնագիտական, առասպելաբանական, լեզվաբանական, մատենագիտական զուգահեռները օգտագործված են հնաժողովրդագրական հիմնահարցերի համալիր մեկնաբանության համար:

Աշխատանքում օգտագործվել և ներկայացվել են Վ. Բունակի, Վ. Ալեքսեևի, Մ. Աբդուշելիշվիլու, Ա. Մովսեսյանի, Ռ. Մկրտչյանի, Ռ. Բուբուշյանի, Հ. Ազիզյանի նախկինում հրատարակված աշխատությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Աշխատանքում հնամարդաբանական ընտրույթը, ըստ գանգաչափական տվյալների, ներկայացված է որպես պատմական սկզբնաղբյուր՝ հանրությունների նմանությունը և տարբերակվածությունը փաստելու նպատակով: Նմանությունը մեկնաբանված է հիմնականում տարածքային, պատմամշակութային ընդհանրականության համատեքստում: Կենսահնագիտությանը նվիրված բաժիններում, որպես մեթոդաբանական ուղեցույց, կիրառված է Ա. Սելյեի հարմարվողականության համախտանիշի տեսությունը՝ որպես փոփոխականության ձևակազմիչ գործոն:

Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Լճաշենի և Ներքին Գետաշենի դամբարանադաշտերի պեղումներից հայտնաբերված միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանական ներկայացուցչական հավաքածուները առաջին անգամ ուսումնասիրվել են կենսահնագիտական ատամնաախտաբանական մեթոդներով: Համեմատական հետազոտությունների համատեքստում հնարավոր դարձավ փաստագրել Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության սննդային նախապատվությունները և քաղցի հետևանք հանդիսացող սթրեսային իրավիճակների բացակայությունը: Նույն ծրագրով և մեթոդներով կենսահնագիտական հատկանիշները իմաստաբանելու նպատակով, որպես համեմատական, առաջին անգամ ուսումնասիրվել են Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության թանգարանում պահվող հարավռուսական տափաստանների յամնայա և կատակոմբային մշակույթներին պատկանող դամբարանաբլուրներից պեղված գանգաբանական հավաքածուները: Համադրվել են երկու տարբեր իրողություններ հանդիսացող պատմաաշխարհագրական և տնտեսամշակութային բովանդակություն ունեցող Սևանի ավազանի համալիր տնտեսածև վարող միջին և ուշբրոնզեդարյան բնակչության ու համաժամանակյա տափաստանային քոչվոր-անասնապահների կենսահնագիտական հատկանիշները: Արդյունքում բացահայտվել է ատամնաախտաբանական ցուցիչների հանդիպման հաճախականության ծայրահեղորեն տարբերակող վիճակագրություն:

Նախկինում ուսումնասիրված և համալրված Լճաշենի հնամարդաբանական հավաքածուի և առաջին անգամ ներկայացված Ներքին Գետաշենի գանգաբանական ժողովածուի գանգաչափական և ոսկրաչափական միջինացված ցուցանիշների հիման վրա բնութագրվել են այդ

դամբարանադաշտերում թաղված միջին և ուշբրոնզեդարյան բնակչության մարդաբանական նկարագրերը՝ որպես դոլիխոկեֆալ, բարձրադեմ, խիստ պրոֆիլավորված քթով, միջինից բարձր հասակ ունեցող հնահանրություն: Նրանց ձևաբանական առաջատարը դիմային կմախքի բարձրության ռեկորդային չափերն են և գանգասկավառակի չափազանց մեծ ծավալը: Միջին և ուշբրոնզեդարյան բնակչության հասակը երկու սեռերի պարագայում բնութագրվում է որպես միջինից բարձր:

Նոր մոտեցում է ցուցաբերվել Ներքին Գետաշենի միաժամանակյա ակտով իրագործված խմբային թաղումներից հայտնաբերված գանգերի ներխմբային ուսումնասիրությանը: Հիմնական բաղադրիչների մեթոդով իրականացված վիճակագրական ուսումնասիրության արդյունքում ձևաբանական ինտեգրալային բնութագրերի դաշտերում խմբավորվելու շնորհիվ բացահայտվել է այդ համալիրներում թաղված մարդկանց առավել սերտ ժառանգաբանական կապը:

Լճաշենի և Ներքին Գետաշենի հնամարդաբանական նյութերի սեռատարիքային տվյալների հիման վրա առաջին անգամ վերակառուցվել է երկու հնահանրությունների ժողովրդագրական պատկերը՝ որպես մահացության ցուցանիշների առավել ներկայացուցչական և հավաստի մոդել: Բացահայտվել է Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության կյանքի երկար տևողությունը, արական և իգական անձանց մահացության ցուցանիշների տարբերակվածությունը, արական սեռի մարդկանց առավել երկարակեցությունը: Ներքին Գետաշենի խմբային թաղումներով դամբարաններից պեղված գանգաբանական նյութերի սեռատարիքային տվյալների վրա կառուցված մահացության ցուցանիշների վերլուծությունը վնասվածքաբանական, լեզվաբանական, առասպելաբանական և հնագիտական փաստարկների համատեքստում՝ հնարավորություն ընձեռեցին մեկնաբանություններ անել հատկապես սերնդագործության համար պիտանի կանանց, միտումնավոր, բռնի սպանության երևույթի մասին՝ որպես ծեսի դրսևորում: Ծեսը մեկնաբանվեց որպես սոցիալ-ժողովրդագրական կարգավորիչ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է բուն ատենախոսությունից և չորս հավելվածներից: Բուն ատենախոսության տեքստը բաղկացած է ներածությունից, ութ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Հավելվածները կազմված են՝ 1. լուսանկարներից 2. աղյուսակներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սևանի ավազանի բրոնզ-երկաթեդարյան դամբարաններից հավաքագրված հնամարդաբանական նյութերը բազմիցս մեկնաբանվել են էթնոժառանգաբանական համատեքստում և ունեն շուրջ 100-ամյա պատմություն: Դամբարանային համալիրներից հայտնաբերված հնամարդաբանական նյութերը անցած դարի խորհրդային մարդաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից համարվում էին կարևոր պատմական սկզբնաղբյուր՝ ծագումնաբանական հարցերի պարզաբանման պարագայում:

Հայաստանի հնամարդաբանության պատմությունը սկսվում է 1929 թվականից, երբ Վ. Բունակը հրատարակեց Սևանի ավազանի բրոնզ-երկաթեդարյան դամբարաններից՝ Ե. Լալայանի կողմից պեղած գանգաբանական նյութերը: Դրանց ընդհանուր երկարակերպությունը հիմք տվեց հեղինակին «մոտեցնելու Սևանի գանգերը հյուսիսային, և ոչ թե միջերկրածովյան տիպերին»: Օգտվելով Ե. Լալայանի օրագրից, 1931 թ. հրատարակված նրա մենագրությունից և հետագայում հրատարակված պեղումների արդյունքների տվյալներից՝ հնարավոր եղավ պարզել, որ որոշ գանգեր թվագրվում են, ոչ թե երկաթի, այլ բրոնզի դարով:

Հայաստանի հնամարդաբանությանը վերաբերող մեծ համահավաք աշխատանք իրականացրեց Վ. Ալեքսեևն իր՝ Կովկասի ժողովուրդների ծագումնաբանությանը նվիրված հիմնարար մենագրության մեջ:

Լճաշենի հնամարդաբանական հավաքածուն հավաքագրվել է 1956 թ. մինչև 2018 թ.: Թվաքանակով այն Անդրկովկասի ամենաներկայացուցչական ժողովածուն է, որը հնամարդաբանական նյութի աճին զուգընթաց բազմիցս հրատարակվել է Հ. Ազիզյանի, Ռ. Բուբուշյանի, Վ. Ալեքսեևի, Ա. Մովսեսյանի, ապա Ռ. Մկրտչյանի կողմից: 20-րդ դ. երկրորդ կեսի խորհրդային դպրոցի գանգաբանական

ուսումնասիրություններն ավարտվում էին էթնոժառանգաբանական համարձակ եզրահանգումներով: Վ. Ալեքսեևը կասկածի տակ է դնում Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության հյուսիսային ծագումնաբանությունը: Ռ. Բուբուշյանը նրանց համարում է տեղական, կովկասյան տարբերակ:

Ցամաքաբերդի գանգերի զանգվածեղությունն ու լայնադիմությունը Հայաստանի երկաթեդարյան համաժամանակյա առավել նրբակազմ և փոքր տրամաչափեր ունեցող գանգաբանական ընտրույթների կողքին, ըստ Վ. Ալեքսեևի, տարօրինակ է թվում: Այս հավաքածուի հնագիտական վերաուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց թվագրել միջին բրոնզի դարով և բացատրել այս ընտրույթի ձևաբանական առանձնահատկությունները:

Հայատանի հանրապետության տարածքից հայտնաբերված միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների վերլուծականը, մինչ վիճակագրական մեթոդների կիրառումը, ի զորու էր տալ միայն մեկ պատասխան՝ նշված ժամանակահատվածի հնահանրությունները պատկանում են Եվրոպեոիդ մեծ ռասային: Երբեմն հեղինակներն այն դասակարգում են դրա հարավային ճյուղի մարդաբանական տիպերի սահմաններում՝ չտալով այն հարցի պատասխանը, թե ինչպես է հյուսիսային եվրոպեոիդներին հատուկ դոլիխոկեֆալությունը չափազանց ցայտուն արտահայտված հայաստանյան հնամարդաբանական նյութերում: Անպատասխան է նաև ժամանակակից հայերին հատուկ հարթածոծրակության և խիստ բրախիկեֆալության երևույթը, այս տիպի ի հայտ գալու պահն ու պատճառը: Միանգամայն ակնհայտ է, որ դիմային կմախքի կառուցվածքը՝ երկարադիմությունը և քթոսկրերի չափազանց պրոֆիլավորվածությունը, ժամանակի ընթացքում փոփոխություն չեն կրել:

Միջին բրոզեդարյան գանգաբանական հավաքածուները առանձնանում են երեք ձևաբանական առաջատարներով (տանձաձև բացվածքի մեծ բարձրություն, քթոսկրերի չափազանց պրոֆիլավորվածություն և գանգասկավառակի մեծ ծավալ), որոնք չունեն իրենց համաժամանակյա առաջավորասիական և կովկասյան զուգահեռները և համարվում են բավական արխաիկ բնութագրեր: Էթնոժառանգաբանական համատեքստում միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների ձևաբանությունն այնքան էլ վստահելի սկզբնաղբյուր չհանդիսացավ հայերի էթնիական պատմությունը շարադրելու համար: Նույն գանգաբանական ընտրույթներից հավաքագրված հնագույն ԴՆԹ ուսումնասիրությունների արդյունքները հիմք հանդիսացան փաստելու, որ հայերի մայրական գենոֆոնդը ունի առնվազն 8000 տարվա անընդհատականություն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԻ ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևանի ավազանում (պատմական Գեղարքունիք, ներկայիս՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ) մեկ դարից ավել շարունակվող հնագիտական հետազոտությունները փաստում են, որ այս տարածքն էական դեր է ունեցել Հին Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան պարբերաշրջանների պատմա-մշակութային գործընթացներում: Հայ և այլազգի հնագետների մի քանի սերունդ՝ սկսած XX դ. սկզբներից մինչև օրս, պարբերաբար հետազոտում են այս տարածաշրջանը: Այդ ուսումնասիրողների թվում են Երվանդ Լալայանը, Աշխարհբեկ Քալանթարը, Լևոն Գյուրզադյանը, Անտոն Աջյանը, Բորիս Պիոտրովսկին, Գեդեոն Միքայելյանը, Հարություն Մնացականյանը, Հարություն Մարտիրոսյանը, Էմմա Խանզադյանը, Լևոն Պետրոսյանը, Աշոտ Փիլիպոսյանը, Ռաֆաելե Բիշոնեն, Նեդա Պարմեջիանին, Սիմոն Հմայակյանը, Նորա Ենգիբարյանը, Ռոբերտո Դանը, Արսեն Բոբոխյանը, Ռենե Կունցեն և այլք:

Տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքները վկայում են, որ վաղ բրոնզի շրջափուլում (կուր-արաքսյան մշակույթ՝ մ.թ.ա. IV հազ. կեսերից մինչև մ.թ.ա. III հազ. վերջին քառորդ) Սևանի ավազանի բնակլիմայական պայմանները (մեղմ ձմեռ, տեղումներով առատ ամառ) առավել բարենպաստ են եղել տեղանքի բնակեցման համար: Այս փուլին վերաբերող համալիրներ հետազոտվել և պեղվել են Լճաշենում, Չկալովկայում, Նորաշենում, Գավառում (Կամո), Սարուխանում, Զոլաքարում, Ներքին Գետաշենում, Նորաբակում, Ծովակում, Սոթքում, Գեղամասարում, Արտանիշում և այլուր: Ուսումնասիրված հնագիտական հուշարձանների տվյալներից կարելի է ենթադրել, որ Սևանի ավազանի վաղբրոնզեդարյան հասարակությունը չի ունեցել ընդգծված սոցիալական շերտավորում, բնակչությանը բնորոշ են եղել նստակյաց կենսակերպը և տնտեսավարման երկրագործական-անասնապահական զուգորդված եղանակը:

Սևանի ավազանում ընդհանուր համապատկերը փոխվել է մոտավորապես մ.թ.ա. III հազ. վերջին քառորդից, ինչը սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների հետ միասին, թերևս, պայմանավորվել է նաև էկոլոգիական գործոններով: Մ.թ.ա. XXII-XVIII դդ. Գեղարքունիքի գրեթե բոլոր հատվածներում (Ցամաքաբերդ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Հայրավանք, Նորատուս, Հացառատ, Լիճք, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ, Զոլաքար, Վարդենիս, Արտանիշ և այլն) տարածում են

ստանում թռեղք-վանաձորյան միջինբրոնզեդարյան մշակույթին վերաբերող հնամշակութային իրողությունները: Ըստ որում այս փուլին վերաբերող նյութերը բացառապես դամբարանային համալիրներից են: Հանգամանք, որն անուղղակի կերպով վկայում է այդ մշակույթը կրողների տնտեսավարման հիմնականում անասնապահական եղանակը և ժամանակավոր (սեզոնային) վրանատիպ կայանատեղիներում բնակվելու հանգամանքը: Սրանով, թերևս, կարելի է բացատրել Սևանի ավազանի բազմաշերտ բնակավայրերում մ.թ.ա. III-II հազ. սահմանագծի միջինբրոնզեդարյան (թռեղք-վանաձորյան) արտեֆակտների բացակայության խնդիրը:

Մոտավորապես մ.թ.ա. XIX-XVIII դդ. Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան մասամբ գոյատևած ուշ թռեղք-վանաձորյան (բացառապես դամբարանային) իրողությունների կողքին նկատվում են սևան-արցախյան, կարմիրբերդյան և վան-ուրմիական մշակութային խմբերին բնորոշ դրսևորումներ: Դրանք վկայված են Լճաշենի, Նորատուսի, Գավառի, Մռթբի ձորի, Հացառատի, Երանոսի, Ծակքարի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Ջոջ կողի, Ալբերդի, Քարի դռան, Նորաբակ 1-ի, Կոլ պալի, Ծովակի և այլ բնակատեղիներում ու դամբարանադաշտերում: Այսինքն, միջին բրոնզի այս փուլում (մ.թ.ա. XIX-XVIII դդ.) նկատվում է Սևանի ավազանի լքված վաղբրոնզեդարյան (կուր-արաքսյան) բնակավայրերի վերաբնակեցում, ինչպես նաև նոր բնակավայրերի հիմնում նշված մշակութային խմբերի ներկայացուցիչների կողմից: Այդ գործընթացների արդյունքում, մ.թ.ա. XVIII-XVI դդ. ընթացքում ուշ թռեղք-վանաձորյան, սևան-արցախյան, կարմիրբերդյան և վան-ուրմիական մշակութային խմբերի կենսակերպերի աստիճանական մերձեցման և դրանց կրողները հանդի-սացող հնահանրությունների միախառնման հետևանքով մ.թ.ա. XVI-XV դդ. սահմանագծից Գեղարքունիքում սկսվում է նշմարվել և մ.թ.ա. XV-XIV դդ. ժամանակագրական սահմաններում վերջնականապես ձևավորվել նոր մշակույթ, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «լճաշեն-մեծամորյան» անվանումը: Հնագիտական հուշարձանների ընձեռած տվյալները (հզոր պարսպապատ բնակատեղիներ, մետաղագործության և հատկապես զինագործության ան-նախադեպ աճ, ընդգծված սոցիալական շերտավորում ունեցող հասա-րակությունների ձևավորում, տարանցիկ առևտրական, տնտեսական և փոխանակային գործարքների ընդլայնում, ռազմաքաղաքական կապերի հաստատում հինմերձավորարևելյան հզոր տերությունների հետ և այլն) մատնանշում են քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դդ.) Գեղարքունիքում ձևավորված մարտունակ տոհմացեղային (գուցեև վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

Սևանի ավազանի բրոնզեդարյան սոցիալ-մշակութային իրողությունների հնարավորինս ընկալելի համապատկերի վերականգնման գործում կարևոր դեր ունի նաև այդ ամենն իրականացրած հանրությունների հնամարդաբանական հետազոտությունների համակողմանի իրականացումն ու վերջինիս հենքի վրա տարածքի հնաժողովրդագրական գործընթացների վերակազմությունը: Այս առումով, սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվել են Լճաշենի, Ցամաքաբերդի, Նորատուսի, Արծվաքարի, Դարի գլխի, Հացառատի, Քանագեղի, Ներքին Գետաշենի, Նորաբակի միջին և ուշբրոնզեդարյան դամբարանադաշտերի պեղումներից հայտնաբերված և հստակ թվագրություն ունեցող հնամարդաբանական նյութերը:

Լճաշենի դամբարանադաշտը գտնվում է Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի արևելյան կողմում՝ Սևան-Վարդենիս մայրուղուց աջ, Սևանա լճի հյուսիս-արևմտյան անկյունի ափամերձ հատվածում: Նախնական հետազոտումն ու պեղումները դեռևս XX դ. սկզբին իրականացրել է հնագետ-ազգագրագետ Ե. Լալայանը: Լճաշենի բրոնզեդարյան դամբարանադաշտը զբաղեցնում է մի քանի տասնյակ հեկտար տարածք և ընդգրկում է ավելի քան 1000 դամբարաններ: Դրանց պարբերական ուսումնասիրությունը սկսել է հնագետ Հ. Մնացականյանը 1950-ական թթ. սկզբին և այն շարունակել մինչև 1972 թ. : Պեղվել են եզակի հարուստ և տեղեկատվական նյութ պարունակող 200-ից ավել հիմնահողային և քարարկղային դամբարաններ: Լճաշենի դամբարանադաշտի պեղումների նոր փուլը սկսվել է 1980-ական թթ. հնագետ Լ. Պետրոսյանի գլխավորությամբ: 1980-2010 թթ. նրա արշավախումբը պեղել է շուրջ 220 բրոնզեդարյան դամբարանային համալիրներ: Դրանք լրացնում են Հ. Մնացականյանի կողմից պեղված նյութերի հավաքածուն և կարևոր տեղեկություններ են պարունակում հատկապես Լճաշենի՝ մ.թ.ա. XVI-XIII դդ. պատմամշակութային գործընթացների մասին: Լճաշենում ընդհանուր առմամբ պեղված 500-ից ավել դամբարանների միջին և ուշբրոնզեդարյան համալիրներից հայտնաբերված հնամարդաբանական նյութերը հետազոտվել են սույն ատենախոսության շրջանակում:

Ցամաքաբերդի դամբարանադաշտ: Գտնվել է նախկին Ցամաքաբերդ գյուղի արվարձանում՝ Սևանա լճի հյուսիսային ափամերձ տարածքում: Առաջին պեղումներն իրականացրել է Ե. Լալայանը 1907 թ.: Պարբերական պեղումները սկսվել են 1954 թ.՝ հնագետ Հ. Մնացականյանի ղեկավարությամբ: Պեղվել են քարարկղային, սալարկղային և հիմնահողային 20-ից ավել դամբարաններ, որոնք վերաբերում են միջին և ուշ բրոնզի շրջափուլերին: Որոշ դամբարաններում հանդիպում են

աքեմենյան շրջանի վերաթաղումներ: Թաղման ծեսն անհատական է և խմբային: Հնավայրն այժմ արդեն գոյություն չունի: Ատենախոսության մեջ օգտագործվել են Ցամաքաբերդի դամբարանադաշտի NN 1-10 դամբարաններում պեղված թվով 10 հնամարդաբանական նյութերը:

Նորատուսի դամբարանադաշտ: Գտնվում է Նորատուս բնակավայրի արևելյան արվարձանում՝ Սևանա լճի ափամերձ հատվածում: Առաջին նախնական հետազոտությունները կատարել է Ե. Լալայանը: 1950-ական թթ. երկրորդ կեսից Նորատուսի «Շոռ գյոլ» անունը կրող դամբարանադաշտում պեղումներ է իրականացրել հնագետ Հարություն Մարտիրոսյանը: Պեղված շուրջ երկու տասնյակ դամբարանները վերաբերում են ուշ բրոնզի – վաղ երկաթի ժամանակներին (մ.թ.ա. XV-XII/XI դդ): Թաղումներն արված են կրոմլեխներով շրջափակված քարարկղների հիմնահողային դամբարանախցերում: Հանդիպում են անհատական, զույգային և խմբային դիադրումներ: 1989-1990 թթ. ընթացքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սևանի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ հնագետ Ա. Փիլիպոսյան) Նորատուսի հարավային արվարձանի մերձակայքում՝ «Յոթ աղբրի ամրոց» հնավայրի տարածքում, պեղել է 26 քարարկղային դամբարանային համալիրներ, որոնցից 13-ը վերաբերում են միջին բրոնզի (դամբարաններ թիվ 8 և 26) և ուշ բրոնզի (դամբարաններ՝ թիվ 4/1-4, 5, 6/1-2, 7, 9, 18/1, 19/1-3, 20, 21, 22, 23, 24) շրջափուլերին:

Արծվաքարի դամբարանադաշտ: Ե. Լալայանն այս դամբարանադաշտը հիշատակում է «Կշլաղ» և «Պուպուի դար» անուններով: Այն գտնվում է Արծվաքար գյուղի (ներկայումս՝ Գավառ քաղաքի հարավարևելյան թաղամաս) հարավային եզրին, բարձունքի վրա: Դամբարանադաշտում 1987-1989 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ Ա. Փիլիպոսյանի գլխավորությամբ: Պեղվել են 14 քարարկղային դամբարանային համալիրներ, որ վերաբերում են ուշ բրոնզի և վաղ երկաթի շրջափուլերին:

Դարի գլխի դամբարանադաշտ: Այս հնավայրը գտնվում է Գավառ քաղաքի արևելյան արվարձանում, դեպի Նորատուս տանող ճանապարհի աջ կողմում, «Խաչեր» դամբարանադաշտից մոտ 3 կմ հարավ: Դամբարանադաշտում 2005 – 2006 թթ. պեղումներ է իրականացրել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը՝ Ա. Փիլիպոսյանի գլխավորությամբ: Պեղվել են ուշբրոնզեդարյան քարարկղային 6 դամբարաններ: Դամբանախցերն արևելք-արևմուտք կողմնորոշում ունեն և ծածկված են 2-4 ծածկասալերով:

Հացառատի դամբարանադաշտ: Այն ներկայումս ՀՀ Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ (նախկինում՝ Նոր Բայազետ) քաղաքի հարավ-

արևմտյան թաղամասն է: Միջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվում է Առնեղ կամ Առեղի անվանումներով: Հացառատի հյուսիսարևելյան ծայրամասում պահպանվել է «Բերդի գլուխ» կոչվող ամրոցը: Այն զբաղեցնում է 11 հա տարածք, իսկ միջնաբերդն ունի շուրջ 3 հա մակերես: Դամբարանադաշտը գտնվում է ամրոցի արևմտյան կողմում և տարածվում է մի քանի տասնյակ հեկտարի վրա: Այստեղ 1905-1907 թթ. առաջին ուսումնասիրություններն է իրականացրել Ե. Լալայանը: 1960-ական թթ. Հացառատի կիկլոպյան ամրոցը չափագրել և դամբարանադաշտում հետախուզական պեղումներ է կատարել Գ. Միքայելյանը: Հայտնաբերվել են միջին բրոնզի շրջափուլի (մ.թ.ա. XVII-XVI դդ.) խեցեղեն և բրոնզե առարկաներ: 2004-2005 թթ. դամբարանադաշտում աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբն՝ Ա. Փիլիպոսյանի գլխավորությամբ: Պեղումների ընթացքում բացվել են հյուսիս-հարավ կողմնորոշմամբ միջին և ուշ բրոնզի շրջափուլերի հիմնահողային և քարարկղային դամբարաններ:

Քանագեղի դամբարանադաշտ: Քանագեղ հնավայրի բնակատեղին ու դամբարանադաշտը գտնվում են Սևանա լճի արևմտյան ափին՝ Երանոս գյուղից մոտ 5.5 կմ հյուսիս: Դամբարանադաշտը տեղակայված է բնակատեղիից մոտ 0,5 կմ հարավ գտնվող բլրակի վրա և վերջինիս շրջակայքում: Տարածվում է հյուսիսից հարավ և ընդգրկում մոտ 10 հա տարածք, որի մակերեսին նշմարվում են շուրջ 3 տասնյակ դամբարաններ՝ իրենց կրոմլեխներով: Ուշադրություն է գրավում թաղման կառույցների տեղաբաշխման առանձնահատկությունը: Առավել խոշոր 9 դամբարանաթմբերը (կրոմլեխների տրամագծերը՝ 8-20 մ) մյուսներից առանձնացված են և տեղակայված դամբարանադաշտի հարավարևմտյան հատվածում: Հնագետ Գ. Միքայելյանը 1960-ական թթ. չափագրման աշխատանքներ է կատարել բնակատեղիում: Ուշբրոնզեդարյան 2 դամբարան 1980-ական թթ. պեղվել է Երևանի Պետական համալսարանի հնագիտական արշավախումբը՝ Գ. Արեշյանի ղեկավարությամբ: 1999-2004 թթ. տեղում հետազոտական աշխատանքներ է իրականացրել և ուշբրոնզեդարյան 8 դամբարաններ պեղել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Ա. Փիլիպոսյան): Դամբարաններն ընդգծված արևելք-արևմուտք կողմնորոշում ունեն, բազալտե քարարկղներ են՝ մ.թ.ա. XV-XIII դդ. վերաբերող հարուստ հնագիտական նյութով:

Ներքին Գետաշենի դամբարանադաշտ: Հնավայրը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանում, Սևանա լճի հարավարևմտյան ափամերձ հատվածում, Ներքին Գետաշեն և Լիճք

գյուղերի միջնատարածքում: 1905-1906 թթ. այն հետազոտել և շուրջ 2 տասնյակ դամբարաններ է պեղել Ե. Լալայանը: 1950-1960-ական թթ. տեղում գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել հնագետ Հ. Մնացականյանը: 1960-ական թթ. երկրորդ կեսին այս տարածքում չափագրման աշխատանքներ է կատարել հնագետ Գ. Միքայելյանը: 1989-1991 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նորակառույցների բաժնի հնագիտական արշավախումբը դամբարանադաշտի պահպանված հատվածում պեղել է շուրջ չորս տասնյակ քարարկղային և հիմնահողային դամբարաններ: Պեղման բոլոր փուլերում էլ ի հայտ են եկել բրոնզ – երկաթեդարյան դամբարանային համալիրներ՝ հարուստ հնագիտական գույքով: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հնամարդաբանական նյութերը:

Նորաբակի դամբարանադաշտ: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 2010 թ.-ից առ այսօր (2010-2013 թթ. Հալեի համալսարանի հետ համատեղ) համալիր աշխատանքներ է իրականացնում ՀՀ Գեղարունիքի մարզի Սոթքի տարածաշրջանում և, մասնավորապես, Նորաբակի դամբարանադաշտում: Այն տեղակայված է համանուն գյուղի մերձակայքում՝ Սևանա լճի հարավ-արևելյան անկյան ափամերձ տարածքում: Ատենախոսության մեջ օգտագործվել են ուշբրոնզեդարյան դամբարանում պեղված 1 անհատի տվյալներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԼՃԱՇԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լճաշենի գանգաբանական հավաքածուն տրոհված է երեք ժամանակագրական շրջափուլերի: Միջինբրոնզեդարյան՝ սևան-արցախյան մշակույթին պատկանող փոքրաթիվ խումբը բաղկացած է 5 արական և 8 իգական սեռի անհատական դիտարկումներից, որոնց ընձեռած չափագրական տվյալները բնութագրում են այս հանրությանը գանգասկավառակի ծայրահեղ երկարակերպությամբ, դիմային կմախքի բարձր կառուցվածքով, հորիզոնական խիստ պրոֆիլավորվածությամբ և քթոսկրերի չափազանց ցցվածությամբ:

Լճաշենի դամբարանադաշտից հայտնաբերված ուշբրոնզեդարյան լճաշեն-մեծամորյան մշակույթին պատկանող գանգաբանական ժողովածուն բավական ներկայացուցչական է: Չափագրված են տղամարդկանց 110 և կանանց 95 գանգեր, որոնց միջինացված

ցուցանիշների վերլուծականը որոշակիորեն տարբերվում է միջինբրոնզեդարյան օրինակների համարժեք տվյալներից:

Լճաշեն-մեծամորյան մշակույթի արական սեռի ներկայացուցիչներն առանձնանում են առավել նրբակազմ ձևաբանությամբ՝ ըստ գանգա-սկավառակի և դիմային կմախքի ավելի փոքր չափերի: Երկու սեռային խմբերում նմանությունը դրսևորվում է տաքսոնոմիական առումով այնպիսի արժեքավոր գանգաբանական հատկանիշների մեջ, ինչպիսիք են գան-գասկավառակի երկարակերպությունը, դիմային կմախքի օրթոգնատ կառուցվածքը, հորիզոնական անկյունների և քթոսկրերի չափազանց մեծ պրոֆիլավորվածությունը, բարձր դիմային կմախքը և ստորին ծնոտի մեծ լայնական չափերը:

Ընդհանուր առմամբ, Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան բնակչությունը բնութագրվում է դոլիխոկեֆալությամբ, օրթոգնատությամբ և դեմքի հորիզոնական անկյունների խիստ սրվածությամբ, քթոսկրերի չափազանց պրոֆիլավորվածությամբ:

Երկու հարյուրամյակների ընթացքում լճաշեն-մեծամորյան մշակույթի կրողների արական խմբի մոտ նկատվում է որոշ գանգաչափական հատկանիշների նվազում: Ուշ բրոնզի դարում, ընդամենը մեկ հարյուրամյակ անց, Լճաշենի բնակչությունը ենթարկվում է նրբակազմեցման: Նույնը չի կարելի ասել իգական ընտրույթի մասին: Սևան-արցախյան և լճաշեն-մեծամորյան մշակույթների կրողների իգական խմբի գանգաչափական հատկանիշների միջինացված ցուցանիշների բնութագրիչների միջև ոչ մի էական տարբերություն չի փաստագրվում:

Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան հանրությունների հասակը, հաշվարկված ըստ Ժ. Օլիվյեի և Մ. Տրոտտերի ու Գ. Գլեզզերի համապատասխան բանաձևերի, կազմում է 168,7 սմ միջինբրոնզեդարյան արական և 159,7 սմ իգական անձնակազմի համար: Ուշ բրոնզի բնակչության հասակը համարյա չի տարբերվում նախորդ շրջափուլի համարժեք ցուցանիշներից (169,6 սմ արական, 159,6 սմ իգական):

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներքին Գետաշենի դամբարանադաշտի միջինբրոնզեդարյան սևան-արցախյան մշակույթին պատկանող փոքրաթիվ խումբը բաղկացած է 7 արական և 7 իգական սեռի դիտարկումներից: Համաձայն

տղամարդկանց խմբի միջինացված ցուցանիշների՝ գանգասկավառակն ունի չափազանց մեծ երկայնական տրամագիծ՝ լայնության և բարձրության միջին չափերի պարագայում, դիմային կմախքը բարձր է և չափավոր լայն, օրթոգնատ և խիստ պրոֆիլավորված հորիզոնական հարթության մեջ, քթոսկրերը չափազանց ցցված են: Կանանց խումբը ընդհանուր առմամբ բնութագրվում է գանգասկավառակի և դիմային կմախքի նույն նկարագրերով:

Ներքին և Վերին Գետաշենի ուշբրոնզեդարյան լճաշեն-մեծամորյան մշակույթին պատկանող խումբը բաղկացած է 36 արական և 20 իգական դիտարկումներից: Տղամարդկանց գանգերը ընդհանուր առմամբ բնութագրվում են գանգասկավառակի մեծ երկայնական, միջին լայնական և փոքր բարձրության չափերով: Դիմային կմախքի լայնականները և բարձրությունը միջին չափերի են: Հորիզոնական անկյունները չափազանց սուր են: Քթի պրոֆիլավորվածությունը խիստ արտահայտված է: Կանանց խմբի գանգասկավառակի հիմնական չափերը նույն բնութագիրն ունեն: Կրկնվում են նաև դիմային կմախքի հիմնական պարամետրերը, որոնք արտահայտված են միջին չափի արժեքներով: Հորիզոնական հատույթում դիմային կմախքը չափազանց սուր է: Քթոսկրերը խիստ պրոֆիլավորված են: Ըստ էության արական և իգական խմբերը միջինացված ցուցանիշներով ներկայանում են համանման բնութագրերով:

Ներքին և Վերին Գետաշենի գանգաբանական հավաքածուի առանձին օրինակների նմանության և տարբերության աստիճանը պարզելու համար օգտագործվել է հիմնական բաղադրիչների մեթոդը (կոմպոնենտային վերլուծություն): Վերլուծությունը ներառում է տղամարդկանց՝ 48 և կանանց՝ 35 գանգեր: Ըստ ստանդարտ ձևաչափի՝ գանգաբանական ծրագիրը ընդգրկում է 43 հատկանիշներ:

Ըստ Ներքին Գետաշենի դամբարանադաշտում պեղված գանգաբանական նյութերի՝ միջին բրոնզից մինչև վաղ երկաթի շրջափուլն ընդգրկող ժամանակահատվածում նկատվում է գանգատուփի չափերի աստիճանական նվազում (մեզոկրանիզացիա)՝ ակնհայտորեն ի հաշիվ ծոծրակային հատվածի հարթեցման: Տեղի են ունենում գանգի դիմային հատվածի նրբակազմեցում և հորիզոնական անկյունների մեծացում: Հավանական է, որ նկարագրված գործընթացների համար հիմք են հանդիսացել ուշ բրոնզի ցեղային բազմատիպ հանրությունների ինտեգրացիոն գործընթացները:

Մի շարք դեպքերում կոնկրետ դամբարաններից հայտնաբերված գանգերն իրենց ձևաբանական բնութագրերի ընդհանրության շնորհիվ, կոորդինատային հարթություններում ձևավորում են բավական մոտ տեղակայված խմբեր: Սա թույլ է տալիս ենթադրել, որ նման պատկերը, թերևս,

նրանց գենոտիպերի նմանության հետևանք է, ինչը կարող է մատնանշել խմբային թաղումներ պարունակող դամբարաններում հուղարկավորվածների հնարավոր ազգակցական-արյունակցական կապը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԳԱՆԳԱԲԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՆՈՆԻԿ ԴԻՍԿՐԻՄԻՆԱՆՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դիսկրիմինանտային վերլուծությունն ընդգրկում է 8 խումբ, ուստի կանոնիկ փոփոխականների թիվը 7-ն է: Այդ խմբերն են Ցամաքաբերդի, Լճաշենի, Ներքին Գետաշենի միջինբրոնզեդարյան, Լճաշենի և Ներքին Գետաշենի ուշ բրոնզի դարի I և II փուլերի գանգաբանական ընտրույթները: Դիսկրիմինանտային վերլուծությունն իրականացվել է 150 արական և 118 իգական գանգերի 22 հատկանիշների հիման վրա: Կոորդինատային հորիզոնական և ուղղահայաց 2 առանցքները կազմում են 4 դաշտեր, որոնցից յուրաքանչյուրը մեկը մյուսին սահուն փոխարինող որոշակի ինտեգրալային նկարագիր է:

Ըստ այդմ, տղամարդկանց միջինբրոնզեդարյան 3 ընտրույթները (18 դիտարկում) կոորդինատային դաշտում (բացառությամբ 2 դեպքի) զբաղեցնում են միայն խոշորակազմ ձևաբանություն ունեցող ինտեգրալային նկարագրերի դրական արժեքների տիրույթները՝ խմբավորվելով ուղղահայաց առանցքի միջնամասում (Լճաշեն), բացասական արժեքների տիրույթում (Ցամաքաբերդ) և դրական արժեքների դաշտում (Ներքին Գետաշեն):

Լճաշենի ընտրույթի անհատական դիտարկումների ուղղահայաց առանցքի միջնատարածքում՝ -1–ից +1 արժեքների սահմաններում, սփռվածության փաստը խոսում է մետիսացման գործընթացների մասին, երբ Լճաշենի նման քաղաքատիպ մեծ բնակավայրում տեղի է ունեցել Սևանի ավազանի սևան-արցախյան մշակույթի կրողների ինտեգրացիա:

Ուշ բրոնզի շրջափուլի տղամարդկանց գանգերի զգալի մասը խախտում է ուղղահայաց առանցքի տիրույթները՝ սփռվելով հորիզոնական առանցքի բացասական արժեքների երկու դաշտերում: Ուշ բրոնզի երկրորդ փուլում (մ.թ.ա. XIV դ) այդ սահմանի հաղթահարումն ավելի ինտենսիվ է դառնում:

Կոորդինատների դաշտում միջին բրոնզի դարի կանանց գանգերը տեղադրված են հորիզոնական առանցքի բացասական փոքր արժեքների և ուղղահայաց առանցքի դրական մեծ արժեքների դաշտում, որոնցից

երկուսը՝ զրոյական կետից զգալի հեռավորության վրա: Նրանք նույն ժամանակահատվածին վերաբերող արական սեռի գանգերի նկարագրերի հակադիր դաշտերում են՝ տարբերվելով վերջիններից իրենց նրբակազմ ձևաբանությամբ:

Ցամաքաբերդի, Լճաշենի և Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների դիսկրիմինանտային վերլուծության շնորհիվ պարզորոշ ուրվագծվում է նշված ժամանակահատվածում նրբակազմության ձևաբանական փոխակերպումը: Այս գործընթացը առավել ակտիվ նկատվում է Ներքին Գետաշենի ուշ բրոնզի և նրա երրորդ փուլի տղամարդկանց խմբերի գանգաբանական նկարագրերում, որոնք զբաղեցնում են բացառապես բացասական փոքր չափերով օժտված նմուշների դաշտը:

Դատելով միջին բրոնզի ժամանակահատվածով թվագրվող տղամարդկանց և կանանց գանգերի կոորդինատային դաշտում դասավորվածության բնույթից՝ կարելի է ենթադրել, որ սևան-արցախյան մշակույթի կրողների արական հատվածն իր համայնքի, գերդաստանի սահմանները չի լքել, իսկ իգական անձնակազմը, հատկապես ուշ բրոնզի շրջափուլից սկսած, այլ համայնքներից բերված անհատներ են, որոնք իրենց ձևաբանությամբ խթանել են նրբակազմեցման գործընթացը: Էկզոգամ ամուսնությունների շնորհիվ Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան հասարակությունը մի քանի սերնդի ընթացքում ենթարկվել է ձևաբանական փոխակերպումների, որը դրսևորվել է գանգի բացարձակ չափերի նկատելի նվազեցմամբ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԳԱՆԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀՆԱՖԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սևանի ավազանի ուշ բրոնզ - վաղ երկաթեդարյան գանգաբանական հավաքածուների հնաֆենետիկական համեմատական վերլուծությունն իրագործված է կատակոմբային, աֆանասևյան և անդրոնովյան մշակույթների կրողների համարժեք նյութերի հետ: Ուսումնասիրված է 534 գանգ՝ 28 այլընտրանքային հատկանիշների ծրագրով, որոնցից 394-ը Գեղարքունիքի դամբարանային համալիրներից պեղված նմուշներ են:

Արդյունքները ներկայացված են բազմաչափ սանդղակավորման հնարքի միջոցով: Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան խմբերը ցուցադրում են ֆենետիկական մոտիկություն և բազմաչափ սանդղակավորման գրաֆի-

կական պատկերի վրա խմբավորվում կոմպակտ: Ուշ բրոնզի դարի գանգաբանական նյութը հավաքագրված է Ներքին Գետաշենի, Լճաշենի և Կարմիրի դամբարանային համալիրներից:

Հայաստանի տարածքից հայտնաբերված բոլոր գանգաբանական հավաքածուները բնութագրվում են մետոպիկ կարանի, վերհոնքային անցքի, այտոսկրային կարահետքի, գագաթոսկրային անցքերի, լյամբդաձև կարանի մեջ առկա ներդիր ոսկորների, թմբկախոռոչի անցքի և քմային թմբիկի բարձր հանդիպման հաճախականությամբ:

Միևնույն ժամանակ որոշ հատկանիշներ, որոնք բավականին հաճախ են հանդիպում այլ եվրոպեոիդ հին հանրություններում, Հայաստանի գանգաբանական հավաքածուներում սակավ են փաստվում, ինչպես, օրինակ, ծոծրակապտկային կարանի ներդիր ոսկորները, ճակատոսկրային անցքերը և աստերիոն կետի ներդիր ոսկորները:

Լճաշենի, Ներքին Գետաշենի, Կարմիրի ուշբրոնզեդարյան հին հանրությունները ձևավորում են բավականին կոմպակտ կլաստեր: Նշանակալից է Ներքին Գետաշենի ուշ բրոնզի և վաղ երկաթի խմբերի նմանությունը, ինչը ապացույց է նույն դամբարանադաշտում թաղված անհատների ժառանգաբանական կապի մասին:

Գեղարքունիքի բրոնզ-երկաթեդարյան ժողովածուների համեմատության արդյունքները յամնայա, կատակոմբային, անդրոնովյան, աֆանասևյան մշակույթներին պատկանող հավաքածուների հետ առանձնացնում են երեք կլաստեր՝

1. Հայաստանի տարածքից հայտնաբերված ուշ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հավաքածուները
2. յամնայա և կատակոմբային,
3. աֆանասևյան և անդրոնովյան մշակութային խմբերը:

Համաձայն ստացված պատկերի՝ գանգասկոպիական հատկանիշների ֆենետիկական բնութագրերն արտացոլում են հին հանրությունների գենոֆոնդի առանձնահատկությունները և ժառանգաբանական կապերը:

Այսպիսով, ըստ ուսումնասիրության արդյունքների, կարելի է փաստել Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան հին հանրությունների ժառանգաբանական մոտիկությունը: Երկաթի դարում նկատվում է որոշակի տարբերակվածության և բազմազանության դրսևորում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԵՐԻ ՀՆԱԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դամբարանադաշտի կամ դրա մի հատվածի հանգուցյալների սեռատարիքային տվյալների հանրագումարը պայմանականորեն ընդունված է համարել, որ համամասնորեն արտացոլում է տարվա ընթացքում մահացած տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների տոկոսային հարաբերությունը:

Հայաստանի բրոնզեդարյան բնակչության սեռատարիքային կազմի ու մահացության վերաբերյալ արժեքավոր տեղեկատվություն են պարունակում Լճաշենի և Ներքին Գետաշենի դամբարանադաշտերից պեղված ներկայացուցչական հնամարդաբանական հավաքածուները:

Ներքին Գետաշենի դամբարանադաշտի խմբային թաղումները հիմնականում իրականցված են միաժամանակյա ակտով (101 դիտարկում): Լճաշենի դամբարանային համալիրները (288 դիտարկում), գերազանցապես անհատական, երբեմն զույգային և հազվագյուտ դեպքերում՝ եռանհատ թաղումներ են:

Հաշվարկվել են մահացության հետևյալ ցուցանիշները.

- հանգուցյալների կոնկրետ խմբի միջինացված տարիքը
- նույնն՝ առանց երեխաների ու դեռահասների
- երեխաների մահացության տոկոսը
- 50 տարեկանից բարձր անհատների մահացության տոկոսը
- տղամարդկանց ու կանանց մահացության տոկոսներն առանձին-առանձին
- դրանց տոկոսային փոխհարաբերակցությունը

Այս դամբարանադաշտում ամփոփված բնակչության մահվան պատճառները կարող էին հանդիսանալ բոլոր հնարավոր գործոնները: Ինչ վերաբերում է Ներքին Գետաշենի դամբարաններում ամփոփված բնակչության հնաժողովրդագրությանը, ապա պետք է հաշվի առնել, որ միաժամանակյա ակտով իրագործված խմբային թաղումներում մահվան դեպքերի հիմնական պատճառը բռնի սպանությունն էր:

Ըստ Ներքին Գետաշենի միջին բրոնզի շրջափուլի բնակչության միջինացված հնաժողովրդագրական բնութագրերի՝ բոլորի մահացության միջին տարիքը, ներառյալ երեխաներինը, կազմում է 29.5, իսկ առանց երեխաների՝ 34.8 տարեկան: Շուրջ ինը տարվա տարբերությամբ արական և իգական սեռերի ներկայացուցիչների համապատասխան ցուցանիշները հետևյալն են՝ 38,4 տարեկան՝ տղամարդկանց և 29,6-ը՝ կանանց համար: Մանկական մահացության տոկոսը միջինում կազմել է 17,2%:

Կանանց մահացության ամենաբարձր գագաթնակետը նկատվում է 25-29 սերնդագործության ակտիվ տարիքային տիրույթում: Հուղարկավորվածների կազմում 45 տարեկանից բարձր կանայք չկան: Տղամարդկանց մահացությունը տատանվում է համեմատաբար սահուն և կազմում է մեծ տոկոս 50-ից անց տարիքում, ինչը բոլոր հանգուցյալների 22.9%-ն է: Բավականին մեծ է տղամարդկանց թիվը զառամյալ տարիքում:

Թեև այս ընտրույթը ներկայացուցչական չէ, այնուամենայնիվ, վերը նշված հիմնական հնաժողովրդագրական բնութագրերը՝ տղամարդկանց և կանանց մահացության անհամաչափությունը, 50 տարեկանից բարձր տղամարդկանց մեծ տոկոսը, զառամյալ կանանց բացակայությունը, կրկնվում են Ներքին Գետաշենի դամբարանադաշտի ուշ բրոնզի շրջափուլի լճաշեն-մեծամորյան մշակույթի կրողներ հանդիսացող հին բնակչության գրաֆիկական պատկերը և մահացության աղյուսակները դիտարկելիս: Ի համադրություն միջին բրոնզի ընտրույթի՝ ուշ-բրոնզեդարյանն անհամեմատ ավելի ներկայացուցչական է (72 դիտարկում): Ուշ բրոնզի շրջափուլի մահացության ցուցանիշների հիմնական բնութագրերը համընկնում են միջին-բրոնզեդարյան նմանատիպ տվյալների հետ:

Ըստ մահացության ընդհանուր բնութագրիչների՝ Գետաշենի ուշբրոնզեդարյան բնակչության մահացության միջին տարիքը, ներառյալ նաև երեխաներինը, կազմում է 30.7, իսկ առանց երեխաների՝ 36.2 տարի: Տղամարդկանց և կանաց համար մահացության այս ցուցանիշները հետևյալն են. 41.3՝ տղամարդկանց և 28,7 տարի կանանց համար: Վերջիններիս մահացության ամենաբարձր ծայրակետը նկատվում է 25-29 տարիքային տիրույթում: Մանկահասակների մահացությունը կազմում է 18.1%:

Լճաշենի դամբարանադաշտում միջին բրոնզի շրջափուլում հուղարկավորված անձանց մահացության միջին տարիքը 34,2 տարեկանն է, առանց երեխաների՝ 39,8-ը: Արական և իգական սեռերի ներկայացուցիչների համար ցուցանիշները հետևյալն են. 42,6 տարեկան՝ տղամարդկանց և 37,3 տարեկան՝ կանանց համար: Արական և իգական սեռերի ներկայացուցիչների տվյալների գրաֆիկական պատկերները և մահացության աղյուսակները համեմատելիս, ի հայտ է գալիս 20-ից 24 տարիքային միջակայքի ցուցանիշների ակնառու անհամամասնություն: Կյանքի բնական ավարտին մոտ տարիքում (50+ տարեկան) երկու սեռային խմբերում միասին այն կազմում է ամենամեծ ծավալը՝ 33.9%, որում տղամարդկանց դիտարկումների բաժինը 38.6% է, կանանցը՝ 29.6%:

Ըստ ուշ բրոնզի շրջափուլում Լճաշենի դամբարանադաշտում հուղարկավորվածների հնամարդաբանական բնութագրերի՝ մահացության

միջին տարիքը, ներառյալ նաև երեխաներինը, 28,7 տարեկանն է, առանց երեխաների՝ 35,3: Արական և իգական սեռերի ներկայացուցիչների համար համապատասխան ցուցանիշները հետևյալն են. 36,7 տարի՝ տղամարդկանց համար և 33,6՝ կանանց:

Լճաշենի դամբարանադաշտում թաղված միջին-ուշբրոնզեդարյան հանրությունների մահվան միջին տարիքը գերազանցել է 30-ամյա սահմանը: Ցուցանիշ, որը համընդհանուր է եվրասիական տարածաշրջանում քննարկվող պատմական ժամանակահատվածի համար: Եթե կանանց խմբում միջին-ուշ բրոնզի շրջափուլերում այս ցուցանիշը կազմում է 37. 3 և 33. 6 տարի, ապա տղամարդկանց խմբում այն ներկայանում է 42. 6 և 36. 7 տարիքային ցուցանիշներով՝ միջինբրոնզեդարյան արական հավաքածուում նույնիսկ շրջանցելով քառասնամյա սահմանը: Ցայտուն է երկու սեռերի մահացության միջինացված արժեքների կտրուկ տարբերությունը: Տղամարդկանց երկարակեցությունն ակնհայտ է: Փաստ, որը նույնպես իր բազմաթիվ զուգահեռներն ունի եվրասիական տարածքների բրոնզեդարյան հասարակություններում: Համաձայն Լճաշենի ուշբրոնզեդարյան տվյալների՝ մանկական մահացությունը կազմում է դիտարկումների մեկ քառորդը (25.6%): Ըստ մանկական մահացության ցուցանիշների՝ բացակայում են նորածինները: Այդ երևույթը կարող է բացատրվել մահացած նորածինների և մանկահասակ երեխաների թաղման առանձնահատուկ՝ համայնքին պատկանող դամբարանադաշտի սահմաններից դուրս ամփոփելու արարողակարգով: Կարելի է ենթադրել, որ մայրական կաթով սնվելու պարագայում նորածինների ու մինչև 2 տարեկան երեխաների իմունային համակարգն առավել պաշտպանված էր ախտահարումներից, ինչով էլ կարելի է բացատրել մինչև 4 տարեկան երեխաների մահվան ցածր ցուցանիշը տվյալ հասարակություններում:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԻՋԻՆ ԵՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԵՐԻ ԱՏԱՄՆԱԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնաատամնաախտաբանական ուսումնասիրություններն իրագործված են Լճաշենի, Ներքին և Վերին Գետաշենի, Նորատուսի, Քանագեղի, Դարի գլխի, Հացառատի, Նորաբակի դամբարանադաշտերից հայտնաբերված գանգաբանական հավաքածուների հիման վրա:

Հետազոտական ծրագիրը ներառում է ատամնաախտաբանական վեց հատկանիշներ՝ էմալային հիպոպլազիա, աբսցես, կարիես, կեն-

դանության օրոք ատամների կորուստ և դրանց մաշվածության աստիճանը, ատամնաքար: Այս առումով, ըստ Ա. Գուդմանի մեթոդաբանության, վերոնշյալ հատկանիշները դիտարկվում են որպես ֆիզիոլոգիական սթրեսի բնորոշիչներ:

Պաթոօդոնտոլոգիական ծրագրով հետազոտվել են Գեղարքունիքի մարզի միջին և ուշ բրոնզի դարերի հնագիտական համալիրներից պեղված արական 158 և իգական 139 անհատների վերին և ստորին ծնոտներ:

Գեղարքունիքի հնավայրերից պեղված հավաքածուի բոլոր 297 դիտարկումների մեջ կա էմալային հիպոպլազիայի միայն 4 առանձին դեպք (1,3%), որից 3-ը՝ Լճաշենի նյութերում:

Ընդհանուր ընտրույթի երկու սեռային խմբերում կարիեսով ախտահարվել են արական 30 և իգական 32 անհատներ, ինչը կազմում է քննարկվող ընդհանուր ընտրույթի համապատասխանաբար 19% և 23%-ը:

Սևանյան ընդհանուր հավաքածուի արական և իգական սեռի ընտրույթներում աբսցեսը սկսում է ֆիքսվել համապատասխանաբար 22-25 և 18-20 տարեկան տարիքային խմբերում: Այս պաթոլոգիայի առաջացման հաճախականությունը երկու սեռերի ներկայացուցիչների համար մի փոքր ավելի բարձր է արական խմբերում (39,9%), քան կանանց մոտ (33,1%):

Գեղարքունիքի տարածքի միջին և ուշ բրոնզի պարբերաշրջանների բնակչության ատամների մաշվածության աստիճանը 35 տարեկանից բարձր անձանց համար տատանվում են համապատասխանաբար 5,9, 4,6 (տղամարդիկ) և 5,7, 4,2 (կանայք) միավորների տիրույթում:

Գեղարքունիքի տարածքի բրոնզեդարյան բնակչության մոտ կենդանության օրոք ատամի կորստի անհատական դեպքերն առավելապես արձանագրվում են տղամարդկանց մոտ 20-25, իսկ կանանց մոտ՝ 18-22 տարեկաններից: 35 տարեկանից բարձր կանանց մոտ ստորին ծնոտի ատամները (հատկապես ծամիչները ու կտրիչները) ավելի հաճախ են թափվում, քան տղամարդկանց մոտ:

Սեռատարիքային խմբերի բաժանելիս ատամնաքարի հանդիպման հաճախականությունը ցույց է տալիս, որ այն առկա է բոլոր տարիքի կանանց և 35 տարեկանից բարձր տղամարդկանց ընտրույթների կեսից ավելիի մոտ: Երիտասարդ (մինչև 35 տարեկան) տղամարդկանց մոտ ատամնաքարի նստվածքն ավելի մեծ է (76,1%):

Գեղարքունիքի ատամնաախտաբանական իրավիճակի գնահատականը լուսաբանվել է համեմատական վերլուծականների շնորհիվ:

Էմալային հիպոպլազիան, որը Գեղարքունիքի հավաքածուում չնչին է (1,3%), իրանահիրաքյան համահավաք նյութերում կազմում է 14%:

Սևանի տարածքից հայտնաբերված միջին և ուշ բրոնզի շրջափուլերի հնամարդաբանական հավաքածուներում կարիեսի

հանդիպման հաճախականությունը (21%) երկու սեռերի համար և, ընդհանրապես, բոլոր տարիքի ներկայացուցիչների մոտ չի կարելի բարձր համարել, եթե այն համադրելու լինենք իրանական սարահարթի և Իրաքի բրոնզի – երկաթի պարբերաշրջանների նմանատիպ ընդհանրացված տվյալներին (36%):

Ինչ վերաբերում է աբսցեսի ցուցանիշներին, ապա այս ախտանիշի հանդիպման հաճախականությունը համարյա նույնական է համեմատական նյութերում (Իրան, Իրաք՝ 37%, Սևանի ավազան՝ 36,7%):

Գեղարքունիքի բրոնզի պարբերաշրջանի բնակչության ատամնաախտաբանական իրավիճակի գնահատականը իրագործված է նաև հարավռուսական տափաստանների համահավաք (68 արական և 47 իգական դիտարկում) նյութերի համարժեք ցուցանիշների համեմատական հենքի վրա:

Այս նյութերում էմալային հիպոպլազիան փաստված է 68 արական դիտարկումներից 20-ի, իսկ 47 կանացի գանգերից 14-ի մոտ և համապատասխանաբար կազմում է 29,4% և 29,8%: Տափաստանային բրոնզեդարյան հավաքածուներում էմալային հիպոպլազիան ցուցաբերում է հանդիպման զգալի հաճախականություն Գեղարքունիքի հավաքածուների հետ համեմատության դեպքում:

Կարիեսը տափաստանային հավաքածուներում չափազանց քիչ է հանդիպում: Արձանագրված է միայն 1 տղամարդու և 2 կնոջ մոտ, ինչը համապատասխանաբար 68 և 47 դիտարկումներում կազմում է 1,5 և 4,3 %:

Աբսցեսի հանդիպման հաճախականությունը յամնայա և կատակոմբային մշակույթներին պատկանող համահավաք ընտրույթի արական խմբում կազմում է 32,4%, իսկ իգականում՝ 21,3%: Այս ցուցանիշները ավելի ցածր են Գեղարքունիքի համարժեք տվյալներից (39,9% և 33,1%):

Յամնայա և կատակոմբային մշակույթների կրողների մոտ ատամնաքարն առկա է տղամարդկանց՝ 51 (75%) և կանանց՝ 27-ի (57.4%) մոտ: Այս միջին վիճակագրական տվյալների համեմատությունը հայաստանյան նյութերի հետ ի հայտ է բերում որոշակի նմանություններ: Ընդհանուր առմամբ, երկու համեմատական ընտրույթներում էլ ատամնափառի առաջացման տոկոսը զգալիորեն բարձր է այդ տարածաշրջանի համար հաշվարկված ընդհանուր միջին մակարդակից:

Եթե ընդունենք, որ էմալի հիպոպլազիան սննդային սթրեսի բավականին հուսալի ցուցիչ է և օրգանիզմում կալցիումի, ֆոսֆորի, վիտամին Դ-ի առկայության չափորոշիչ, ապա կարելի է ենթադրել, որ Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչությունը սննդի ու միկրոտարրերի պակաս չի ունեցել և չի տառապել հիպովիտամինոզով, քանի որ

Գեղարքունիքում գտնվող Սևանա լիճը ապահովել է նրան առատ ձկնամթերքով, իսկ հյուսիսից, արևմուտքից և հարավից լիճը երիզող Արեգունու, Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաները՝ արևոտ օրերի ավելի քան բավարար առատությամբ:

Առաջավորասիական երկրագործների և տափաստանային խաշնարածների հետ համեմատականը գնահատում է Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության՝ կարիեսի հանդիպման հաճախականությունը միջին սանդղակներում: Իրանի և Իրաքի բրոնզ-երկաթեդարյան բնակչության կարիեսի ցուցանիշները չափազանց բարձր են (36%), իսկ տափաստանային՝ յամնայա և կատակոմբային մշակույթի կրողների ցուցանիշները չեն գերազանցում 20%-ը: Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչության համարժեք տվյալներն ավելի մոտ են վերջիններիս (19%):

Ատամի մաշվածության բարձր աստիճանը Սևանի ավազանի հնագույն բնակիչների մոտ աբսցեսի դեպքերի զգալի մասի հիմնական պատճառն է հանդիսացել:

Այսպիսով, Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչության մեջ էմալային հիպոպլազիայի սակավությունը կարելի է համարել մեթաբոլիկ սթրեսի բացակայության և պարենային ռեսուրսների առատության հետևանք:

Միևնույն ժամանակ կարիեսի ոչ բարձր մակարդակը հնարավոր է կապել ծովամթերքի առատության և պրոտեիններով հարուստ դիետիկ ձկնային սննդի նկատմամբ տեղական բնակչության նախասիրությունների հետ: Հանգամանք, որ կանխում է ատամնային համակարգի դեմիներալիզացիան:

Ինչ վերաբերում է աբսցեսի դրսևորման զգալի հաճախականությանը, ապա դրա պատճառները կարող են լինել ինչպես քաղաքագոյացման բազմաբնույթ գործընթացների ախտածին միջավայրը (ուշ բրոնզի շրջափուլ), այնպես էլ ատամների մաշվածության շատ բարձր աստիճանը: Սա պայմանավորված է կոշտ սննդակարգով և ատամնային համակարգի մեխանիկական սթրեսով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզի դարերի հնամարդաբանությանը նվիրված ուսումնասիրություններում միակ ընդհանուր եզրահանգումն այն է, որ նշված տարածքի բրոնզեդարյան բնակչությունը պատկանել է եվրոպեոիդ ռասային: Վ. Բունակը նրանց հյուսիսային ծագում էր վերագրում, Վ. Ալեքսեևը կասկածի տակ է դնում

այս վարկածը, Ռ. Բուբուշյանը Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության ձևաբանության մեջ տեսնում է կովկասյան տիպի հնագույն ներկայացուցիչներին:

2. Ժամանակակից հայերի և Հայաստանի հնագույն միտոքոնդրիոումային ԴՆԹ-ի ուսումնասիրությունների արդյունքում ապացուցվել է, որ հայերի մայրական գենոֆոնդը ունի առնվազն 8000 տարվա անընդհատականություն:

3. Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան (մ.թ.ա. XIX-XVIII դդ.) մասամբ գոյատևած ուշ թռեղք-վանաձորյան իրողությունների կողքին նկատվում են մասնավորապես սևան-արցախյան մշակութային խմբին բնորոշ դրսևորումներ: Ուշ թռեղք-վանաձորյան, սևան-արցախյան, կարմիրբերդյան մշակութային խմբերի կենսակերպերի աստիճանական մերձեցման և դրանց կրողները հանդիսացող հին հանրությունների միախառնման հետևանքով մ.թ.ա. XVI-XV դդ. սահմանագծից Սևանի ավազանի տարածքում սկսվում է նշմարվել մ.թ.ա. XV-XIV դդ. ժամանակագրական սահմաններում վերջնականապես ձևավորված նոր մշակույթ, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «լճաշեն-մեծամորյան» անվանումը: Հնագիտական հուշարձանների ընձեռած տվյալները (հզոր պարսպապատ բնակատեղիներ, մետաղագործության և հատկապես զինագործության աննախադեպ աճ, ընդգծված սոցիալական շերտավորում ունեցող հասարակությունների ձևավորում, տարանցիկ առևտրական, տնտեսական և փոխանակային գործարքների ընդլայնում, ռազմաքաղաքական կապերի հաստատում հինմերձավորարևելյան հզոր տերությունների հետ և այլն) մատնանշում են քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դդ.) Սևանի ավազանում ձևավորված մարտունակ տոհմացեղային (գուցեև վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

4. Լճաշենի գանգաբանական հավաքածուն տրոհված է երեք ժամանակագրական շրջափուլերի (միջինբրոնզեդարյան, ուշբրոնզեդարյան 1, ուշբրոնզեդարյան 2): Միջինբրոնզեդարյան սևան-արցախյան մշակույթի կրողներն առանձնացել են իրենց գանգասկավառակի ծայրահեղ երկարակերպությամբ, դիմային կմախքի բարձր կառուցվածքով, նրա հորիզոնական խիստ պրոֆիլավորվածությամբ և քթոսկրերի չափազանց ցցվածությամբ: Միջին բրոնզեդարյան բնակչության ձևաբանական առաջատարը գանգասկավառակի չափազանց մեծ ծավալն է, որը համարվում է արխաիկ հատկանիշ: Ուշ բրոնզի դարում, ընդամենը մեկ հարյուրամյակ անց, Լճաշենի բնակչությունը ենթարկվում է նրբա-կազմեցման՝ պահպանելով վերը նկարագրված ընդհանուր ձևաբանությունը:

Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան հանրությունների հասակը կազմում է 168,7 սմ միջինբրոնզեդարյան արական և 159,7 սմ իգական անձնակազմերի համար: Ուշբրոնզեդարյան բնակչության հասակը գրեթե չի տարբերվում նախորդ շրջափուլի համարժեք ցուցանիշներից (169,6 սմ արական, 159,6 սմ իգական):

5. Ներքին Գետաշենի դամբարանադաշտը վերաբերում է միջին բրոնզի սևան-արցախյան, ուշբրոնզեդարյան լճաշեն-մեծամորյան 1, երկաթի լճաշեն-մեծամորյան 2, 3 մշակույթների շրջափուլերին (մ.թ.ա. XXII/XXI – մ.թ.ա. VIII/VII դդ.): Ներքին Գետաշենի սևան-արցախյան մշակույթին պատկանող տղամարդկանց և կանանց ընտրույթները բնութագրվում են գանգասկավառակի երկայնական չափազանց մեծ, լայնական և բարձրության տրամագծերի միջին չափերով: Դիմային կմախքը բարձր է և չափավոր լայն, օրթոգնատ և խիստ պրոֆիլավորված հորիզոնական հարթության մեջ:

Ներքին Գետաշենի ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուն բնութագրվում է գանգասկավառակի մեծ երկայնական, միջին լայնական և փոքր բարձրության չափերով: Դիմային կմախքի լայնական և երկայնական հատկանիշները միջին չափերի են, հորիզոնական անկյունները՝ չափազանց սուր, քթոսկրերը՝ խիստ պրոֆիլավորված:

6. Կոմպոնենտային վերլուծության շնորհիվ կոորդինատային առանցքի հարթություններում Ներքին Գետաշենի խմբային կոնկրետ թաղումներից պեղված գանգերը, իրենց ձևաբանական բնութագրերի ընդհանրությամբ, ձևավորում են բավական սերտ դասավորված խմբեր: Կարելի է ենթադրել, որ դա նրանց գենոտիպերի նմանության հետևանք է, ինչը կարող է հիմք հանդիսանալ խոսելու խմբային արարողակարգով թաղումներում ամփոփված անձանց հնարավոր ազգակցական կապի մասին:

7. Ցամաքաբերդի, Լճաշենի և Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների դիսկրիմինանտային վերլուծության շնորհիվ պարզորոշ ուրվագծվեց նշված ժամանակահատվածում նրբակազմության ձևաբանական փոխակերպումը հատկապես արական սեռի ներկայացուցիչների միջավայրում: Այս գործընթացը առավել ակտիվ նկատվում է Ներքին Գետաշենի ուշ բրոնզի և նրա երրորդ փուլի (մ. թ. ա. XIV-XIII դդ.) տղամարդկանց խմբերի գանգաբանական նկարագրերում, որոնք զբաղեցնում են բացառապես բացասական փոքր չափերով օժտված նմուշների դաշտը: Նրբակազմեցման ձևաբանական փոխակերպումը շատ կարճ ժամանակահատված է ընդգրկում (250-300 տարի), որի առավել հավանական բացատրությունը ներցեղային էկզոգամ հարաբերությունների

բնույթն է: Այլ համայնքներից բերված նրբակազմ կանայք «կատալիզատորի» դեր են կատարել միախառնման գործընթացների ժամանակ:

8. Գանգի այլընտրանքային հատկանիշների ֆենետիկական ուսումնասիրության շնորհիվ բազմաչափ սանդղակավորման պատկերի վրա պարզորեն առանձնանում են երեք կլաստեր՝ 1. Հայաստանի տարածքից հայտնաբերված ուշ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի հավա-քաղուները, 2. յամնայա և կատակոմբային, 3. աֆանասևյան և անդրոնովյան մշակութային խմբերը: Համաձայն ստացված արդյունքների՝ կարելի է փաստել Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան հին հանրությունների ժառանգաբանական մոտիկությունը:

9. Լճաշենի միջին - ուշ բրոնզի շրջափուլերի հնամարդաբանական հավաքածուների սեռատարիքային տվյալների հիման վրա հաշվարկված մահացության միջին գործակիցները փաստում են, որ կանանց խմբում միջին-ուշ բրոնզի շրջափուլերում մահվան միջին տարիքը համա-պատասխանաբար կազմում է 37. 3 և 33. 6 տարի, տղամարդկանց խմբում այն ներկայանում է 42. 6 և 36. 7 տարիքային ցուցանիշներով՝ միջինբրոնզեդարյան արական հավաքածուում նույնիսկ շրջանցելով քառասնամյա սահմանը: Տղամարդկանց երկարակեցությունն ակնհայտ է: Այս ցուցանիշը բնորոշող միջինացված արժեքները պայմանավորված են հասուն և տարեց տղամարդկանց քանակական գերակշռությամբ: Մանկական մահացության ցուցանիշը 17. 9 % է միջին և 25.6%՝ ուշբրոնզեդարյան հասարակությունների համար:

10. Ներքին Գետաշենի միջին և ուշբրոնզեդարյան թաղումները խմբային են և առավելապես իրականացվել են դիադրման միաժամանակյա ակտով: Դրանք պատկանել են հասուն տարիքի տղամարդկանց, որոնց թաղման ժամանակ զոհաբերվել և նույն դամբանախուցն է իջեցվել ուղեկցող անձնակազմ, հատկապես՝ երիտասարդ կանայք: Սպանությունների ամենավստահելի ապացույցները կմախքի վրա առկա վնասվածքների հետքերն են, ուստի մահվան միջինացված բնութագրերը չեն կարող արտահայտել մահացության բնական պատկերը: Ներքին Գետաշենի ուշբրոնզեդարյան բնակչության մահացության միջին տարիքը կազմում է 30.7, իսկ առանց երեխաների՝ 36.2 տարի: Տղամարդկանց և կանանց համար մահացության այս միջին ցուցանիշները 13-ամյա տարբերությամբ հետևյալն են. 41.3՝ տղամարդկանց և 28,7 տարի՝ կանանց համար: Այս անհամաչափությունը ձևավորվում է բացառապես պատանի (15-19 տարեկան) և երիտասարդ (20-24, 25-29 տարեկան), սերնդագործության առումով առավել ունակ տարիքի կանանց մահացության շնորհիվ: Տղամարդկանց և կանանց

մահացության միջին ցուցանիշների ահռելի տարբերությունն, ըստ էության, ստացվում է 50-ն անց տղամարդկանց երկարակեցության հաշվին:

11. Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզեդարյան բնակչությունը տառապել է բոլոր հնարավոր ատամնային խեղումներով՝ ատամնամաշվածությամբ, ատամնաթափությամբ, ատամնաքարով, կարիեսով, որոնց պատճառը, ինչպես կոշտ, այնպես էլ փափուկ, ածխաջրատներով հարուստ հացահատիկային սննդանին էր: Այս ախտերի շնորհիվ պարադոնտոզը և աբսցեսը չափազանց մեծ տոկոս (36,7%) են կազմում: Ըստ էմալային հիպոպլազիայի չնչին ցուցանիշների (1,3%)՝ այս հասարակությունը բացարձակապես քաղցի չի ենթարկվել, ինչը բացատրվում է համալիր տնտեսաձևի ընձեռած հնարավորություններով: Երկրագործությունը ապահովել է ածխաջրատային, անասնապահությունը՝ պրոտեինային և ճարպային, իսկ ծովամթերքը՝ միներալներով հարուստ սննդակարգ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Փիլիպոսյան Ա., **Մկրտչյան Ռ.,** Գեղհովտի վանտոսպյան (ուրարտական) քարայր-դամբարանը, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշար, հ. 18, Պրակ IV, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2001, 160 էջ:
2. **Մկրտչյան Ռ.** , Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանության վերլուծություն՝ ըստ անցած դարի գիտական աշխատությունների, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 2024, 24, N 1, էջ 268-276:
3. **Մկրտչյան Ռ. ,** Սիմոնյան Հ. , Լճաշենի դամբարանադաշտի բրոնզեդարյան հնամարդաբանական հավաքածուն (Կենսահնագիտական ուսումնասիրություն և հատկանշական ցուցակ), Երևան, «Անտարես» հրատ. , 2024, 250 էջ:
4. **Мкртчян Р. А.,** Палеоантропологический материал неолитических погребений могильника «Госпитальный Холм», «Проблемы археологии Поднепровья», Днепропетровск, 1984, стр. 44-60.
5. **Мкртчян Р. А.,** Краниологический материал из неолитического памятника «Госпитальный Холм», «Советская Этнография», № 2, Москва, 1987, стр. 111-116.

6. **Мкртчян Р.А.**, Наблюдения по палеодемографии юга Европейской части СССР эпохи энеолита, «Բանբեր Երևանի Համալսարանի», № 1, Երևան, 1987, էջ 193-201.
7. **Мкртчян Р.,** Пилипосян А., Паликян А., Коллективное погребение эпохи Средней Бронзы Неркин Геташена (социо-культурная характеристика), «Вестник Общественных Наук», N 1, Ереван, 1997, стр. 130-141.
8. Алексеев В.П., **Мкртчян Р.А.,** Палеоантропологический материал из погребений в Армении и вопросы генезиса населения куро-аракской культуры, «Советская Этнография», Москва, 1989, № 1, стр. 127-135.
9. Бужилова А.П., **Мкртчян Р.А.**, Критика на книгу Худавердян А. Ю. «Атлас палеопатологических находок на территории Армении». Ереван: Ван Арьян, 2005. 288 с., «Российская Археология» №4, Москва, 2006, стр. 170-172.
10. **Мкртчян Р.,** Палеонатропология Оромского могильника, Изд. «Зангак-97», Ереван, 2001, 120 с.
11. **Мкртчян Р.А.,** Мовсесян А.А., Древнее население бассейна озера Севан (палеофенетический анализ), Вестник Московского университета, Серия XXIII, Антропология, N 4, 2020, стр. 79-89.
12. **Мкртчян Р.,** Воронцова Е., Изучение вариабельности строения черепов из могильника Неркин Геташен (Республика Армения), Вестник Московского университета, серия XXIII антропология, N 1, Москва, 2014, стр. 57-74.
13. Воронцова Е.Л., **Мкртчян Р.А.**, О роли дискретно-варирующих признаков как генетических маркеров в анализе могильников с коллективным обрядом погребений (на примере могильника Неркин Геташен, Армения), Актуальные вопросы антропологии, Вып. 10, Минск, "Беларуская навука", 2015, стр. 70-76.
14. **Мкртчян Р.А.,** Пестряков А.П., Григорьева О.М., Краниологические характеристики черепной коробки (мозгового черепа) погребений бронзового века, Вестник археологии, антропологии и этнографии, 2015, № 2 (29), стр. 87-97.
15. **Мкртчян Р.А.**, Воронцова Е.Л., Симонян А.Г., Население страны Этиуни (по краниологическим данным), Вестник Московского университета. Серия XXIII, Антропология, N 4, 2017, стр. 91–106.
16. Marshall M., **Mkrtchyan R.,** Armenia/Hayastan, in “Routledge Handbook of Archaeological Human Remains and Legislation”, ed. by Nicholas Marquez-Grant, Linda Fibiger, 625 p., London, New York, 2010, Publisher: “Routledge”, pp. 19-34.

17. **Mkrtchyan R.A.,** Simonyan H.A., Vorberichtzur Paläoanthropologie des Skelettmaterials von Norabak 1 und Sotk 2, Archäologie in Armenia II, Landesmuseum für Vorgeschichte, Halle (Saale), 2013, Band 67, pp. 81-84.
18. Allentoft, M., Sikora, M., Sjögren, KG,... **Mkrtchyan R.A.,** et al., Population genomics of Bronze Age Eurasia, Nature 522, 2015, pp. 167–172. (Scopus)
19. Margaryan A., Derenko M., Hovhannisyan H., Malyarchuk B., Heller R., Khachatryan Z., Avetisyan P., Badalyan R., Bobokhyan A., Melikyan V., Sargsyan G., Piliposyan A., Simonyan H., **Mkrtchyan R.**, Denisova G., Yepiskoposyan L., Willerslev E., Allentoft M. E., Eight Millennia of Matrilineal Genetic Continuity in the South Caucasus, Current Biology, Volume 27, Issue 13, 2017, pp. 2023-2028.e7. (Scopus)
20. Karapetian M., **Mkrtchyan R.**, Simonyan H., Ankylosing spondylitis: antiquity and differential diagnosis – a case study of a Bronze Age skeleton from Norabak, southeastern Armenia, HOMO, 2019, 70 (3), pp. 171-183. (Scopus)
21. Movsesian A. A., **Mkrtchyan R. A.,** Simonyan H. G., The ancient populations of the Armenian Highland in the genetic history of Armenians, American Journal of Physical Anthropology, 2020, 173 (1), pp. 158-167. (Scopus)
22. Bobokhyan A., Iraeta-Orbegozo M., McColl H., **Mkrtchyan R.**, Simonyan H., Ramos-Madrigal J., Andrades-Valtueña A., Hnila P., Gilibert A., Margaryan A., Burial of two closely related infants under a "Dragon stone" from prehistoric Armenia, Journal of Archaeological Science: Reports 57, 2024, pp. 1-15. (Scopus)

МКРТЧЯН РУЗАН АЛЬБЕРТОВНА

БИОАРХЕОЛОГИЯ СЕВАНСКОГО БАССЕЙНА

(СРЕДНИЙ И ПОЗДНИЙ ПЕРИОДЫ БРОНЗОВОГО ВЕКА)

Резьюме

1. В исследованиях по биоархеологии населения среднего и позднего бронзового периодов Севанского бассейна единственным общим выводом является то, что население данного региона в бронзовом веке принадлежало к европеоидной расе. В. Бунак считал их происхождение

северным, В. Алексеев ставил эту гипотезу под сомнение, а Р. Бубушян видел в морфологии населения бронзового век Севанского бассейна ранних представителей кавказского типа.

2. Исследования митохондриальной ДНК современных армян и древнего населения Армении показали, что материнский генофонд армян сохраняет непрерывность по крайней мере на протяжении 8000 лет.

3. Наряду с частично сохранившимися поздними триалетско-ванадзорскими элементами в среднебронзовую эпоху (XIX–XVIII вв. до н.э.) в Севанском бассейне заметны проявления, характерные для севан-арцахской культурной группы. В результате постепенного сближения образа жизни поздних триалетско-ванадзорской, севан-арцахской и кармирбердской культурных групп и смешения их носителей, начиная с рубежа XVI–XV вв. до н.э., проявляется новая культура, окончательно сложившаяся в хронологических рамках XV–XIV вв. до н.э., получившая в научной литературе название «лчашен-мецаморская».

Археологические данные (мощные укрепленные поселения, беспрецедентный рост металлургии и особенно оружейного производства, формирование обществ с выраженной социальной стратификацией, расширение транзитных торговых, экономических и обменных операций, установление военно-политических связей с могущественными державами Древнего Ближнего Востока и др.) свидетельствуют о существовании в рассматриваемый период (XV–XIII вв. до н.э.) боеспособных родоплеменных (возможно, раннегосударственных) образований в Севанском бассейне.

4. Краниологическая коллекция из Лчашена делится на три хронологических этапа (средний бронзовый век, поздний бронзовый 1 и поздний бронзовый 2). Носители севан-арцахской культуры среднего бронзового периода отличались крайне удлинённой формой черепа, высоким и сильной горизонтальной профилированностью лицевого скелета и сильно выступающими носовыми косточками. Морфологической доминантой населения этого периода был крайне большой объём черепной коробки, считающийся архаичным признаком. Через столетие, в позднем бронзовом веке, население Лчашена претерпевает процесс грацилизации при сохранении вышеописанной общей морфологии.

Средний рост мужчин и женщин населения эпохи средней бронзы составлял соответственно 168,7 см и 159,7 см. Аналогичные показатели в позднем бронзовом веке были почти идентичны: 169,6 см у мужчин и 159,6 см у женщин.

5. Некрополь в Неркин Геташене относится к следующим культурным фазам: среднебронзовая севанско-арцахская, позднебронзовая лчашен-мецаморская 1, железного века — лчашен-мецаморская 2 и 3 (XXII/XXI – VIII/VII вв. до н.э.). Черепа мужчин и женщин, относящихся к севан-арцахской культуре, характеризуются крайне большими продольными размерами черепной коробки, а также средними поперечными и высотными диаметрами. Лицевая скелет высокий, умеренно широкий, ортогнатный и резко профилированный в горизонтальной плоскости.
Краниологическая коллекция позднего бронзового века из Неркин Геташена в среднем характеризуется большим продольным, средним поперечным и малым высотным диаметрами. Лицевая часть имеет средние размеры ширины и длины, крайне острые горизонтальные углы и резко профи-лированные носовые косточки.
6. Благодаря компонентному анализу черепа из конкретных захоронений Неркин Геташена образуют плотно сгруппированные кластеры, что можно объяснить генотипическим сходством и, возможно, указывает на родственные связи между погребёнными.
7. Дискриминантный анализ черепов из Цамакаберда, Лчашена и Неркин Геташена позволил чётко очертить морфологические изменения, связанные с грацилизацией, особенно среди мужчин. Этот процесс наиболее выражен у мужчин позднебронзового периода из Неркин Геташена третьей фазы (XIV–XIII вв. до н.э.), чьи черепа занимают пространство отрицательних координат, то есть малых велечин.

Данный процесс охватывает короткий промежуток времени (250–300 лет), и наиболее вероятным его объяснением является экзогамный характер внутриплеменных браков. Женщины из других общин, обладающие грацильнностью, сыграли роль «катализатора» в процессе смешения.
8. Фенетический анализ альтернативных признаков черепа позволил на многомерной шкале выделить три кластера: 1. коллекции позднего бронзового – раннего железного века из Армении; 2. Ямная и катакомбная культуры, 3. Афанасьевская и андроновская культурные группы. Результаты анализа свидетельствуют о генетической близости древних обществ позднего бронзового века Севанского бассейна.
9. По поло-возрастно данным краниологических коллекций из Лчашена рассчитаны средние показатели смертности: соответственно у женщин в среднем бронзовом веке — 37,3 года, в позднем — 33,6 года; у мужчин — 42,6 и 36,7 лет. В среднем бронзовом веке мужской показатель даже превышает 40 летный рубеж. Явное долголетие мужчин и его средние показатели обусловлены численным преобладанием взрослого и пожилого

контингента. Детская смертность составляет 17,9% в среднем и 25,6% в позднем бронзовом веке.

10. Погребения в Неркин Геташене имели групповой характер и преимущественно осуществлялись одновременным актом трупоположения. Они принадлежали взрослым мужчинам, при погребении которых жертвовались и опускались в ту же гробницу сопровождающие лица, особенно молодые женщины. Самые надёжные доказательства убийств — следы повреждений на скелетах, поэтому усреднённые показатели смертности не отражают естественную картину смертности. Средний возраст смерти населения позднего бронзового века Неркин Геташена — 30,7 лет (без учёта детей — 36,2 года). Разделённые по полу показатели: мужчины — 41,3 года, женщины — 28,7 лет. Эта разница объясняется высокой смертностью девушек и молодых женщин (15–29 лет), находящихся в наиболее репродуктивном возрасте. Огромный разрыв в среднем возрасте смерти мужчин и женщин объясняется, в основном, долголетием мужчин старше 50 лет.

11. Население Севанского бассейна среднего и позднего бронзового века страдало от всех возможных зубных патологий: изношенности и потери зубов зубного камня, кариеса. Причиной этого было как твёрдое, так и мягкое углеводсодержащее питание на основе зерновых. Пародонтоз и абсцесс составляют значительный процент (36,7%). Низкий уровень эмалевой гипоплазии (1,3%) свидетельствует об отсутствии голода, что объясняется возможностями комплексного хозяйства: земледелие обеспечивало углеводы, скотоводство — белки и жиры, а продукты из водоёмов — минералами.

MKTCHYAN RUZAN ALBERT

BIOARCHEOLOGY OF THE SEVAN BASIN

(MIDDLE AND LATE BRONZE AGES)

Summery

1. In bioarcheological studies of the population of the Sevan Basin during the Middle and Late Bronze Ages, the only common conclusion is that the population of this region during the Bronze Age belonged to the Caucasoid race. V. Bunak believed they were of northern origin, V. Alekseev questioned

this hypothesis, and R. Bubushyan saw ancient representatives of the Caucasian type in the morphology of the Bronze Age population of the Sevan Basin.

2. Studies of mitochondrial DNA from modern Armenians and the ancient population of Armenia have shown that the maternal gene pool of Armenians has been continuous for at least 8,000 years.

3. Along with partially preserved elements of the late Trialeti-Vanadzor culture, the Sevan Basin during the Middle Bronze Age (XIX-XVIII centuries BCE) shows features characteristic of the Sevan-Artsakh cultural group. As a result of the gradual convergence of lifestyles among the late Trialeti-Vanadzor, Sevan-Artsakh, and Karmir Berd cultural groups—and the intermixing of their bearers—a new culture was formed beginning at the turn of the XVI-XV centuries BCE, fully developed by the XV-XIV centuries BCE. In academic literature, it is known as the Lchashen-Metsamor culture.

Archaeological evidence (massive fortified settlements, unprecedented growth in metallurgy—especially arms production, the formation of societies with pronounced social stratification, expansion of transit trade and exchange operations, establishment of military-political ties with powerful states of the Ancient Near East, etc.) points to the existence of militarily capable tribal (possibly proto-state) formations in the Sevan Basin during the XV-XIII centuries BCE.

4. The cranial collection from Lchashen is divided into three chronological phases: Middle Bronze Age, Late Bronze Age 1, and Late Bronze Age 2. The population of the Sevan-Artsakh culture of the Middle Bronze Age were characterized by extremely elongated cranium, highly structured and strongly profiled facial, and highly prominent nasal bones.

A defining morphological trait of the population during this period was an extremely high cranial capacity, considered an archaic feature. Just a century later, during the Late Bronze Age, the population of Lchashen undergoes gracilization, while maintaining the overall morphology described above.

The average stature of men and women in the Middle Bronze Age was 168.7 cm and 159.7 cm. In the Late Bronze Age, the stature remained nearly identical: 169.6 cm for men and 159.6 cm for women.

5. The necropolis at Nerkin Getashen corresponds to the following cultural phases: Middle Bronze Age Sevan-Artsakh, Late Bronze Age Lchashen-Metsamor 1, and Iron Age Lchashen-Metsamor 2 and 3 (XXII/XXI – VIII/VII centuries BCE). The skulls of men and women from the Sevan-Artsakh culture are characterized by very large longitudinal cranial dimensions, as well as average transverse and height diameters. The facial part of the skull is high, moderately wide, orthognathic, and sharply profiled in the horizontal plane.

The Late Bronze Age cranial collection from Nerkin Getashen is characterized by large longitudinal, average transverse, and small vertical cranial sizes. The facial part has average width and length indicators, extremely acute horizontal angles, and sharply profiled nasal bones.

6. Thanks to component analysis, the skulls from specific burials in Nerkin Getashen form tightly clustered groups, which can be explained by genetic similarity and possibly indicate kinship among the buried individuals.

7. Discriminant analysis of skulls from Tsamakaberd, Lchashen, and Nerkin Getashen allowed for a clear delineation of morphological changes associated with gracilization, especially among males. This process is most pronounced in Late Bronze Age males from the third phase of Nerkin Getashen (XIV-XIII centuries BCE), whose skulls were placed in the field of negative low values.

This process spans a short period (250–300 years), and the most likely explanation is the exogamous nature of intra-tribal marriages. Women from other communities with a more gracile physique played a "catalyst" role in this mixing process.

8. A phenetic analysis of alternative cranial traits on a multidimensional scale revealed three clusters:

1. Collections from the Late Bronze – Early Iron Age in Armenia,
2. Yamnaya and Catacomb cultures,
3. Afanasievo and Andronovo cultural groups.

The results indicate a hereditary closeness among ancient societies of the Late Bronze Age Sevan Basin.

9. Based on age and sex data from the cranial collections in Lchashen, average mortality rates were calculated:

- For women: 37.3 years in the Middle Bronze Age, 33.6 years in the Late Bronze Age;
- For men: 42.6 and 36.7 years, respectively. In the Middle Bronze Age, the males age even exceeds 40 years. The apparent longevity of men is explained by a numerical predominance of adults and elderly individuals.
- Child mortality stood at 17.9% in the Middle Bronze Age and 25.6% in the Late Bronze Age.

10. Burials in Nerkin Getashen were group burials and predominantly involved simultaneous burial acts. The burials belonged to adult males, and during their funeral, accompanying individuals—especially young women—were sacrificed and placed in the same tomb. The most reliable evidence of such situtions is the presence of injuries on skeletons; therefore, average mortality rates do not reflect a natural death pattern.

The average age of death in the Late Bronze Age population of Nerkin Getashen was 30.7 years (excluding children — 36.2 years). By gender: men — 41.3 years, women — 28.7 years. This discrepancy is explained by the high mortality among young women (15–29 years), who were in their most reproductive age. The enormous gap in average age of death between men and women is mainly due to the longevity of men over 50 years.

11. The population of the Sevan Basin in the Middle and Late Bronze Ages suffered from all known dental pathologies: tooth wear, loss, calcullus, caries. The cause was both hard and soft carbohydrate-rich diets based on grains. Periodontal disease and abscesses accounted for a significant proportion (36.7%).

The low level of enamel hypoplasia (1.3%) indicates the absence of hunger, which is explained by the opportunities of a diversified economy: agriculture provided carbohydrates, animal husbandry — proteins and fats, and seafood— minerals.